1. Բաժանորդագրվելով Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթին՝ Բաժանորդը պարտավորվում է 1 օրացուցային տարվա ընթացքում (365 օրացուցային օր) օգտվել Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթից և բաժանորդագրության առաջին ամսվա ընթացքում (Ծառայության ակտիվացման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում) մատուցված Ծառայությունների դիմաց վճարում է 1 դրամ:
2. Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթին բաժանորդագրության դեպքում «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից Բաժանորդներին մատուցվող էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված կարգով ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ վճարումների ուշացման պատճառով ծառայությունների մատուցման կասեցման դեպքում սակագնային փաթեթին բաժանորդագրության ժամկետը երկարում է ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ: Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդն օգտվել է մատուցված Ծառայություններից դրանց ակտիվացման օրվանից սկսած առնվազն տասներկու ամիսների (365 օրացուցային օրերի) ընթացքում:
3. Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթի շրջանակներում տրամադրվող ծառայությունների ակտիվացման պահից սկսած առաջին ամսվա ընթացքում ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման դեպքում տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում տրամադրվող Ծառայությունների ամսական 1 դրամով տրամադրման ժամկետը չի երկարում ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ:
4. Եթե Բաժանորդը դադարեցնում է Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթին բաժանորդագրությունը մինչև սահմանված պարտադիր ժամկետի ավարտը կամ Բաժանորդի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հետևանքով Ծառայությունը մինչև սահմանված ժամկետի ավարտը կասեցվում է Օպերատորի կողմից, ապա Բաժանորդը Օպերատորին վճարում է տուգանք, որը հաշվարկվում է Ծառայության ակտիվացման ամսաթվի դրությամբ ակտիվացված Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթի համար սահմանված պարտադիր գործողության ընթացքում Բաժանորդի կողմից վճարվելիք գումարի (ակտիվացված սակագնային փաթեթի ամսավճար ներառյալ ԱԱՀ * 11) և նախքան Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթի դադարեցումը Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթի շրջանակում հաշվեգրված գումարի տարբերության 80%-ի չափով:
5. Հնարավոր է առանց քանակական և ժամկետային սահմանափակումների իրականացնել Ռինտերնետ օֆիս սակագնային փաթեթի գործող սակագնի փոփոխություն՝ անցում կատարելով Ռինտերնետ օֆիս սակագնային փաթեթի մեկ այլ սակագնի:
6. Հնարավոր է իրականացնել Ռինտերնետ օֆիս սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթին: Տվյալ գործարքն իրականացվում է Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթին 1 տարով

բաժանորդագրության պայմանով, և տվյալ դեպքում Բաժանորդի վրա տարածվում են Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթին 1 տարով բաժանորդագրության բոլոր պայմանները:

7. Հնարավոր է իրականացնել Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթի որևէ սակագնի փոփոխություն՝ անցում կատարելով Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթի մեկ այլ սակագնի:

   Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթի Բաժանորդները Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետի ընթացքում հնարավորություն ունեն փոխել ընթացիկ սակագինը՝ անցում կատարելով Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթի միայն ավելի բարձր ամսավճարով սակագնի:

   Սույն կետով սահմանված կերպով փոխելով ընթացիկ սակագինը՝ Բաժանորդը չի ստանում Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթի նոր սակագնին բաժանորդագրության դեպքում տրամադրվող 1(մեկ) ամիս 1 դրամով ծառայությունը: Նոր սակագնին անցումը չի երկարացնում Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետը:

   Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետի ավարտից հետո Բաժանորդները հնարավորություն են ստանում փոխելու ընթացիկ սակագինը՝ անցում կատարելով Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթի թե ավելի բարձր, թե ավելի ցածր ամսավճարով սակագնի:

   Եթե Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթից օգտվելու համար սահմանված պարտադիր ժամկետն ավարտվել է, ապա սույն կետով սահմանված կերպով սակագնային փաթեթի փոփոխության դեպքում Բաժանորդը չի ստանում նոր սակագնին բաժանորդագրության դեպքում տրամադրվող 1 ամիս 1 դրամով ծառայությունը, ինչպես նաև չի պարտավորվում մեկ տարի շարունակ օգտվել Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթից:

8. Հնարավոր է իրականացնել Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով Ռինտերնետ օֆիս սակագնային փաթեթին: Տվյալ գործարքն իրականացվում է Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթի վաղաժամ դադարեցման պայմանով, և այն իրականացվում է միայն Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթի վաղաժամ դադարեցման դեպքում սահմանված տուգանքների վճարումից հետո:

   Եթե սույն կետով սահմանված կերպով սակագնային փաթեթի փոփոխությունն իրականացվում է Ռինտերնետ օֆիս տարեկան սակագնային փաթեթից օգտվելու համար սահմանված պարտադիր ժամկետի ավարտից հետո, ապա այն իրականացվում է առանց տուգանքների վճարման:

9. Եթե Բաժանորդը կատարել է սակագնային փաթեթի (կամ սակագնի) փոփոխություն և միևնույն ամսվա ընթացքում օգտվել է երկու տարբեր սակագնային փաթեթներից (կամ սակագներից), ապա տվյալ ամսվա ամսավճարը հաշվարկվում է ըստ օրերի՝ օգտագործած սակագնային փաթեթների (կամ սակագների) ամսավճարների համամասնությամբ: Սակագնային փաթեթի փոփոխության ծառայությունը մատուցվում է առանց վճարի գանձման, և դրա ակտիվացման համար անհրաժեշտ նախապայման է ժամկետանց պարտքերի բացակայությունը: Նոր սակագնային փաթեթով

(սակագնով) սահմանված պայմանները սկսում են գործել տվյալ սակագնային փաթեթի (սակագնի) ակտիվացման պահից սկսած:

10. «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից մանրածախ շուկայում իրավաբանական անձանց համար նախատեսված Լայնաշերտ ինտերնետ ծառայության միացման համար (կախված ծառայության մատուցման հասցեից) Օպերատորի կողմից հնարավոր է միանվագ վճարի կիրառում: